

ոսկաններ կը յիշուին հոն 1340ին իսկ, որոնք վէճի մը պատճառով՝ 1354ին կը հեռանան եւ 1358ին վերստին կու գան:

Անտարակոյս, վերը յիշուած Հայ վաճառականներու կից Թուրքերը թուրքեր չեն, այլ Թուրքմենիոյ (այն ատեն այդպէս կոչուած) Հայաստանի բնիկ հայեր, իսկ Հայերը՝ անտարակոյս կը զանազանուին իբր բնիկ Կիլիկիացի, որ դեռ նոր կորսնցուցած էր իր անկախութիւնը, 1375ին, առանց կորսնցուցած ըլլալու վերստին ադատելու իր յօյրը, որ կը քաշքշուէր Եւրոպական արքունիքներուն մէջ այդ օրերուն⁽⁶⁾:

Պրիւժի մասին ուղեղիր մը, Բէրոյ Թափուր (1435-1439) կը վրկայէ որ «ամէն տեսակ գորգեր» ասկից ուրիշ վայրեր կը զրկուին, որ անտարակոյս ԺՊ դարուն Հայոց սկսած գորգի առևտուրի շարունակութիւնն է դարձեալ հայերէ կատարուած:

Անգլիոյ⁽⁷⁾ եւ Ֆրանսայի⁽⁸⁾ մէջ գորգի առևտուրին մէջ հին

(6) Պէտք չէ մոռնալ որ Օհան Ալթինի նման շատ հայեր Պարսիկ ճանչցուած են, օրինակ, Ֆրանսայի մէջ: Զուգայեցիները իբր հայ չեն կոչուած հին վաւերաթուղթերու մէջ, այլ ճուլֆալիէն, իբր թէ անոնք հայեր չըլլային: Հայաստան մասնաւորաբար Թուրքմենիա կոչուած է: Անգլիացի մը 1603ին կը գրէր. «Հայաստանի աշնուական թագաւորութիւնը այժմ Թուրքմենիա կոչուած է»: (John Cartwright. — Purchase his Pilgrims, 1905, Vol. VIII. p. 499): Ուրիշ մը 1610ին կը կրկնէ. «Թուրքերը... բնութեամբ արեւալեանցիներ Հայաստանի, որով զայն կոչեցին Թուրքմենիա, ինչպէս որ այսօր կը կոչուին»: (George Sandys. — A Relation of a Journey Begun A. D. 1610. London, 1627, part I, p. 42).

Թափերիէ 1666ին տանները կը գրէ. «Մեծ Հայքը, որ մեր աշխարհացոյցները առանց որեւէ հիմքի կամ պատճառի Թուրքմենիա կը կոչեն» (էջ 141): Իսկ Շարգէն կը զանգատի որ 1673ին տանները աշխարհադիրներէն ոմանք Հայաստանը երեք մասի կը բաժնեն: Առաջինը յատկապէս իր անունով կը կոչեն, երկրորդը կ'անուանեն Թուրքմենիա, եւ երրորդը՝ Վրաստան»: (The Travels of Sir John Chardin, London, 1688, p. 242-243).

Ասիկա միակ հիներուն յատուկ սխալ մը չէր, այլ նորերն ալ կրկնած են:

(7) 1511ին Արեւելեան գորգը ծանօթ էր Անգլիոյ մէջ: 1534ին անգլիական «Հօլի Բրոս» եւ «Մաթիւ Գոնտոն» նաւերը Քիոս եւ Գանատի կղզիներէն կը վերադառնային մետաքսով եւ գորգերով, ուրիշ ապրանքներու հետ: Հետաքրքրական է Ռիչարտ Հադըլայդի կողմէ 1579ին Պարսկաստան զացող Մորկան Հըպըլթոնի արուած գործադրելի ծրագրին երրորդ յօդուածը: «Պարսկաստանի մէջ դուն պիտի գտնես բուրդէ գորգեր՝ շինուած խաւակապերու շարքերով, որոնք աշխարհի լուսազոյններն են, եւ ամենաբնախի կերպով ներկուած. այդ քաղաքներն ու աւանները պէտք է հանդիպիս, եւ պէտք է միջոցներ ձեռք անես այդ կապերուն ներկելու կերպերը սորվելու համար. անոնք այնպէս մը ներկուած են որ ո՛չ անձրեւը, ոչ գինին եւ ոչ ալ քաջախը կրնան արատաւօրել, ու եթէ կարենաս ձեռք բերել այդ վարպետութիւնը՝ այլեւս պիտի չլիանաս կերպաս ներկելու, որովհետեւ թէ որ բուրդէ թելը կամ կապը ներկ կը բռնէ՝ կերպասը աւելի լաւ պիտի բռնէ»: Իսկ 15րդ յօդուածը. «Եթէ վերադարձէ՞ց առաջ կարենաս եղակիօրէն լաւ արհեստաւոր մը գտնել, Թրքական գորգեր շինելու արուեստին մէջ վարպետ, պէտք է զայն Անգլիա բերես, այսպէս աւելցնելով նաեւ բուրնիկերակոթեանդ գործը»: (Hakluyt's Voyages, Vol. II, էջ 202-3): Այս ծրագրին արդիւնքը ինձի անձնօթ կը մտայ: 1610ին Չէորճ Սանտիս կը վկայէր որ Անգլիացի Կ. Պուսոյ Հայ վաճառականներէն կը գնէին Թուրքիոյ կոչուած եւ Պարսկաստանէն ներմուծուած գորգերը»:

(8) Միակ վկայութիւն մը կը պարտի՞ M. Tournefortի որ իր ուղեգրութեան մէջ 1702ին կը վկայէ թէ՛ Ֆրանսացի վաճառականներուն Զիւլեռիայէն տարած ապրանքներուն մէջ կային «մեծ եւ հասարակ գորգեր»: (A Voyage into the Levant, London, 1741, Vol. III, p. 336).